

Ինչպէս կը տեսնուի, արձանագրութեան միջև եղած երկու հորիզոնական գիծերը բնականին են, բայց շուրջը եղած գիծը մենք մեր կողմէն աւելցուցած ենք, քարին արձանագրութիւն գտնուած երեսի ձեւն ու կտրած մասերը ճշտագէտ ցուցնելու համար: Ընդօրինակութիւնը փոքրցուցած ենք դրեթէ կիսով չափ, թէ քարին տարածութիւնը և թէ բնականապէս նշանագրերն: Նշանագրոց երրորդ կարգին մէջ թուշուեի մը ձեւը կայ, որուն ճշտութեանը համար բոլորովին չենք կրնար երաշխաստել, որովհետեւ շատ եղծուած էր այդ նշանագրերն և այնպէս իմն կերեւեր թէ՛ կարծես թուշուն մըն է:

Քարը այս օրերս տեղական կառավարութեան միջոցաւ, կը դրիւի Կ. Պոլսոյ Կայսերական թանգարանին, որուն տնօրէնութեան կողմէն հետազոտ պահանջուած էր, կարևոր հնութիւն մը ըլլալուն պատճառաւ, ինչպէս նաև հրատարակած էին այս վերջին օրերս Կ. Պոլսոյ Ազգային և օտար բոլոր օրաթերքներն:

Հանգէս Ամօրեայ ուսումնականութիւն մէջ հրատարակուած և վերև յիշուած Ազգային արձանագրութեան մի ուրիշ և աւելի ճիշտ ընդօրինակութիւնն ունեցայ այս օրերս, զոր յարմար առթիւ այն ալ պիտի խաւրեմ Արժ. Խմբագրութեանդ, կրկին հրատարակութեան համար Արարատի մէջ:

ՏՐՈՒՏ ԵՊԻՍԿՈՍՈՍ ՊԱՒԵԱՆ,

Կ Ե Ս Ա Ր Ի Ո Յ

1900 Մայիս 15/28
Կ Ե Ս Ա Ր Ի Ա .



ԴԱՆԻԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻԲ.

Ով որ Դանիան ճանաչում է իւր վաղեմի աշխարհագրական դատերեց, բնական է, որ նա այդ փոքր աշխարհի մայրաքաղաքն ևս շատ նշանաւոր բան չի երեւակայում: Բայց խնկայէս Կիոպկենտներ * օտարի վերայ ազդու ապաւորու-

* Այսպէս են տնտանում իրանի դանիայի մեր Կոպկենտներն կոչած խաղաքը:

թիւն է դործում: Այդ քաղաքը ոչ միայն դեղեցիկ է բնական դիրքով, ոչ միայն աւելի ևս դեղեցիկացել է մարդկային հանճարի արուեստով, այլև եւրոպական մեծ խաղախ բոլոր յատկութիւններով բարեկարգուել է և միշտ աւելի յարմարութիւններ է ստանում: Մեծ ճոխութիւն, փարթամութիւն չունի, բայց ճաշակի քաղաքակրթութեան, յառաջագիմութեան կնիքը դրոշմած է վերան, Արդեօք իրա ջրանցքները և ծովի ափը յիշատակենք, որ ձիւնափայլ կարապետներ երամներով և կայմերի շաբաթուն անառով կենդանութիւն են ստանում. արդեօք ծովի և ցամաքի հրաշալիք հրաշալիքի վերայ աւելացնելու մըցութիւնը նկարագրենք. արդեօք քաղաքի վարչութիւնը դովենք, որ ոչ մի քլունգ չի բանեցնել տուել, առանց երեւելի արուեստագէտների կրթմանկարգի ձեռնի, որպէս զի ոչ մի բլրակ, ոչ մի հրուանդան, եզրի ոչ մի կտոր դուր չկուշի և ամէնքը մի սքանչելի փունջ և կատարեալ յօրինուածութիւն ձևացնեն: Կամ միթէ կարելի է լուծեամբ դանց առնել քաղաքի շինութեանց բարեկարգմութիւնը, փողոցների հայելաձև սալաշատակը, առատ լուսաւորութիւնը, արթուն ոտականութիւնը, առողջապահ շուկաները, ամէն կարգի հաղորդակցութիւնը, հերոսների և վաստակաւորների յաւերժացումն արձաններով և յիշատակարաններով և էն: Տիւկո Բրասիլ (Տիւկո դը Բրասիլ), Էրշտէդի, Աննեքսի (Աննեքսի), Բրանդէսի, Էնիքզիլնգի, Ֆլինսէնի Դանիան՝ իրաւամբ պարծենում է իւր փառաւոր Կիոպկենտներով...

Յայտնի է, թէ օտարականը ինչ տանջանքներ է կրում մի քաղաքի մէջ, ուր տեղացիների լեզուն չի հասկանում և ոչ մի ծանօթ մարդ չունի: Դանիացիք բաւական չափով թեթեւացրել են օտարի անճարութիւնը: Ամէն կիոսի (քօշքի) վերայ նկարագրած է քաղաքի մեծ յատակագիծը, փողոցներն էլ խիստ նշմարելի գրով անուններ են կրում:—Մի ընկերութիւն կայ, որ պատրաստ է ձրի խոսքուրդ և առաջնորդութիւն տալու, որ և հրատարակել է եւրոպական լեզուներով (ռուս., գերմ., ֆրանս., անգլիերէն) ուղեցոյցներ ամէն տեսակ մանր մօճեր տեղեկութիւններով:—Մեծ և փոքր խանութներում ամենայն ապրանքի գինը վերան տպագիր նշանակած է: Միայն թէ հիտենաք, թէ դրամի խոշորը կոչվում է կրոնկ (մօտ 54 կոպ.), իսկ մանրը՝ կոռկ (1/2 կոպ.):—Եթէ ուզենաք կառքով պտտել, վերան կը դանէք մի ժամացոյց, որ յատուկ մեքենայութեամբ ցոյց կու տայ, թէ երբ էք կառք նստել, որքան ժամանակ էք պտտել և թէ որքան պէտք է վճարէք:—Կամ եթէ հիւրանոց մտնէք, պատին շարած կը դանէք առճամանը, որոնք ինքնին մա-

տու ցանցում էն ձեզ 10 կոռե տրժէք ունեցող բաները հէնց որ բաց տեղի մէջ ձգէք 10 կոռանց դրամ. դուք այդպէս կարող էք ստանալ լուռ ու մուռն, առանց ծառայի միջնորդութեան, ծխարարչ, սիգար, գարեջուր, բուտերբրոտ պանրով, երշիկով, ձուկով կամ մսով և այլն, իսկ եթէ տեղը դրամ չձգէք, պատը ձեզ ոչինչ չի տայ, սքքան էլ որ փուչ կերպով դռնակի կոթը գէտ ու գէն շարչրկէք:— Եթէ ուզենաք եկեղեցու բարձր դմբէթը բարձրանալ, ծառան ձեզ տալիս է հեռագիտակ, բաց է անում մի դուռ, հրաւիրում է ձեզ մտնել և դուռը փակում է ձեր յետեւից: Դուք մտնում էք լամբերինթոսի բազմաձև դաւիղների մէջ մենակ, բայց մը՝ վատիք, պատի վերայ նկարած սլաքները ձեզ անշիթ կը հասցնեն զանազան պտոյտներով ճիշտ նշանակած տեղը. ապա ձեր առաջ բացուած ընդարձակ տեսարանի բացատրութիւնը կու տայ մի կողմնացոյց, որ դարձեալ սլաքներով և գրով հասկացնում է, թէ ո՞ր ուղղութեամբ ինչ քաղաք, գիւղ, սար կամ ամի էք տեսնում:

Ինչքան որ միայն տեսածներով բան կարելի է հասկանալ, ահա դարձեալ մի քանի դժբերանիացիները բարբից: Մենք տրգէն գիտենք, թէ նոցա կենանքում գիւն ինչ գեր է կատարում. արդարեւ տպարանն ու ներկով գրող վարպետը լու վատտակ ունին այս տեղ: Չուի ծախող կամ աղբ տանող սայլը իւր չորս կողմից ներկով գրած ունի, թէ սայլի տէրն ով է, ինչ է սայլատպանի փողոցի անունը, որն է տան և տելեֆոնի համարը: Մի երկու օր Նիոպէնհատնում ապրելուց յետոյ, ահամայ շատերի հասցէներ էք սովորում: Հէնց որ մի տուն տախտակի ցանկով շրջապատուի կարկատելու համար, իսկոյն ամէն կողմից սուկի պէս բոնում են ներկարարներ, ցանկապառի վերայ շարում են սիրուն սիրուն գրեր, և ձեր աչքը շլացնում են նոր նոր հասցէներով, գէթ մինչև որ տան կարկատանքը աւարտուի: Հիմա երևակայեցէք, թէ այս տեղ յայտարարութիւնն ինչ նշանակութիւն ունի: Սակայն լրագրողում յայտարարելը կամ որմերի վերայ տպագրած մեծ մեծ թերթեր, կոյցները Եւրոպայում այլ ևս ոչ ոքին չի գոհացնում: Թայտարարութեան համար հիմա գլխում են նկարչութեան արուեստի օգնութեան: Ոչ մի նորութիւնից յետ չմնացող Նիոպէնհատնը՝ լիովին լցուցանում է և այս պահանջը:—Արդէն հռչակ ստացած մի գարեջրի գործատուն (Tuberg օլ—ցուբուրգ էոլ) իւր 25ամեակը տօնելիս՝ ուղեց աւելի ևս հռչակել իւր տպարանը: Գործատէրը նշանակեց 3 մլրդանակ լաւագոյն որմածեփ աղգաքրի համար, լաւագոյն պրակաթի համար—1000 կրոնէ, 500 կրոնէ և 200 կրոնէ: Անթիւ մրցողներ հանդիսացան

ուստի գործատէրը իւր գործի համար օգտուէտ համարեց ցուցանակեա կազմել ստացած օրինակներից: Յուշահանդիսի մուտքը մի էր, քաղաքի լաւագոյն փողոցներում երկու յարկի չորս չորս սենեակների պատերը (32 պատ) դարգարուեցան մրցութեան ուղարկած օրինակներով: Այս տեղ կային աշակերտական ձեռքի արտագործիչներ, բայց նաև քաջ արուեստագիտի գործեր, ամէն տեսակ ոճով նկարներ, ճիւղային ոճից սկսած մինչև ամէնանուրբ, անոնց մէջ աշխատանքիւնը, զիցարանութիւնը, պատմութիւնը, արդի իրականութիւնը, խրաբանչիւրն իւր բաժինն ունէր (երեւ թէ 500-ից աւելի էր օրինակների թիւը): Շատ գուարճալի և հրահանգիչ էր այս պատկերահանդէսը գեղասիրութեան տեսակէտից, և ժողովուրդը ուրախութեամբ օգտուեցաւ գործատէրի բարեսէր հաւելից, մեծամեծ բազմութեամբ խոնարմ էին երկու յարկի սենեակներում: Եւ ինչ էք կարծում, որ պրակտր մրցանակ ստացաւ, արդեօք ամէնից սիրունը, բարձր գեղարուեստի արտադրութիւնը,—ոչ: Այլ մրցանակին արժանի համարումը միակ այն առաւելութիւնը ունէր, որ կարող էր իւր գոյներով, պարզ գծերով փողոցի անցուղարձողի ուշադրութիւնը մեծապէս գրաւել:—Իսկ ինչ է յայտարարութեան իսկական խորհուրդը, եթէ ոչ հէնց այդ բանը: Այս պատահական ցուցահանդէսը թող տպացոյց լինի, թէ զանիացիների համար ինչ մեծ պահանջ են դառել հրահանգիչ հատտառութիւնները, որ և առատապէս խնամում են տէրութիւնը, քաղաքը և մասնաւոր բարերարները:

Մի հայեացք ձգենք դրամաճառի պատմահանի վերայ: Այս աղգը գիտութեան և գրականութեան ամէն ճիւղի հրատարակութիւններ ունի: Գրքերի շարքում մի փոքր պատկերադարձ տետրակ էլ կայ հետեւեալ վերնադրով. Fra Blo-dets eg Taarernes Land (տրեան և արտատուքի աշխարհի մասին): Դուք հառկացաք, թէ այդ ինչ աշխարհ է... Երկու տարի առաջ Հայաստանում ճանապարհորդած պատուր Լեօմանը եկել է այս տեղ և քարոզներ է կարդացել իւր տեսած ժողովրդեան ողորմելի վիճակի մասին, որ կարծու է մարգատէրների օգնութեան: Ահա այդ քարոզների բովանդակութիւնն է, որ այս տեղի պատուր Լարենը հրատարակել է, Հայաստանում որբանոց հիմնելու գումար կազմելու համար: Տետրակն արժէ 10 էորէ, և մինչև այժմ վաճառումից գումարուել է 2500 կրոնէ, ուրեմն ծախուել է 25,000 օրինակ: Ահա թէ ժողովուրդը իւր 5 կոպէկն ինչի համար է տալիս, Բայց այս մասին—ուրիշ անգամ:—Ապա աչքի է ընկնում հռչակաւոր Անդէասէնի հէքիաթները շքեղ

հրատարակութիւնը ոչ միայն բնագրի (գանիերէնի) լեզուով, այլև անդլիերէն, ֆրանսիերէն, գերմաներէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով: Հրատարակիչն է Բոյէսըն (Bejesen), որ ոչ այնքան շահե համար է ձեռնարկել գործը, որչափ իւր ազգի փառքն համար: Գանիերէնի հրատարակութեան օրինակն արժէ 32 կրօնէ, իսկ օտար լեզուինը, գործընակի գերմաներէնինը—13 կրօնէ, և գանիացիք չեն բողոքում, որ օտարազգիք իրանց հաշուով են կարգում իրանց Աննեքսէնը: Յոյս կայ, որ հրատարակիչը կլիշէներէ նկատմամբ նոյն ղիջումը կանէ նաև հայերէն հրատարակութեան համար, բայց այս մասին էլ յետոյ:

Մայիսի մէկ: Յայտնի է, որ Եւրոպայում այս օրը պատկանում է մշակներին: որոնք պահանջում են իրանց վիճակի բարւոյցումն, մանաւանդ օրական աշխատութեան միայն 8 ժամ տեղութիւն:—Այս տեղ օրն սկսուեցաւ շատ հասարակ կերպով: խանութներն իրանց առուտուրը, ժողովուրդն իւր լուր օրուայ զբաղմունքը սովորական կերպով վարեց և շարունակեց: Սկսեց անձրեւել, հարուստներն իրանց գրասենյակներում չարախնդութեամբ ժպտացին, որ հանդէսը չի յաջողուի, իսկ մշակն ասաց, թէ երկինքն արտառում է: Սակայն բանուորը չի հարցնում եղանակի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը: Նշանակած ժամին (կէօրեց յետոյ 3-ին), նշանակած փողոցների դժով, այնչափ գեղեցիկ հանդիսաւոր ճանապարհ բացուեցաւ 36 մշակ ընկերութիւնների անցքի համար—կանաչ գրասանդներով, գոյնզգոյն զրօշակներով, հինգ-յարկանի տների պատուհաններից նայող բազմութիւններով, որչափ երբէք չի եղել, ըստ արժանաւոր վիպագրութեան: Այդ գծում կառքերի շարժումը դադարեց, դնացքի գլուխը կազմում էր հրդեհաշէնների խումբը, ամէն մէկ ընկերութիւն իւր երաժշտով, գրուազով, գրօշներով և վառերով մէկ առանձին գեղանկար բաժին էր կազմում և հանդիսատեսների ծափահարութեան և «կեցցէ»-ներն էր արժանանում: 20,000 մարդու թափօրը հանգիստ անցաւ, առանց ոտակիանութեան միջամտութեան, հաւաքուեցաւ մի ընդարձակ հրապարակում: Ի պատիւ 8 ժամի երգ հնչեցրեց (իւրաքանչիւր անգամի վերայ տոյժի նշան կար), երեք անգամ 8 ձևացնող թերթներից տերը, այս տեղ ճառեր խօսուեցան, թէ այժմեան բանուորները առաջուայ պէս վայրենի չեն, օրինական ճանապարհով, երեսփոխանների միջնորդութեամբ պաշտպանում են իրանց դատը, կատարելագործում են արուեստը, ձգտում են դատակարգերը պիտանի և օգտաւէտ կացութեանը և ոչ թէ ջնջելու են յաւակնում և այլն:

Բազաքը ի թիւս այլոց 1864-ին Հելզոլանդի

մօտ մեծ յաղթութիւն տանող ծովապետ Սուէնսոնին արձան է կանդնեցուցել: Ծովային հերոսի նատալները (սրնցից այժմ 2 հատ է մնացել) տարեցտարի մի օրէն նշանով իրանց պետի պատկաւելի յիշատակը նորոգում են. այսօր առաւօտեան արձանի կշտին անցնողները կը տեսնէին մի մեծ փառաւոր պսակ, և ոչ ոք չէր կասկածի, թէ ո՞վ պէտք է կատարած լինի այդ բարեպաշտական ձօնը:

Ս. Մ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԸ

Մ. ԽՈՐԵՆԱՅՈՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒԱԾՔ)

(Եւրոպական տիւր)

Ի

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ք.

2.

(Խառնուած լեզուներով)

Վիշապազանց առասպելը:—Երկու տեղ (Ա. Ի. Բ. խթ.) առասպելի համառօտ բովանդակութիւնն է բերում պատմագիրը, իսկ մի տեղ (Բ. ծա.) պատմում է «Ճշմարտելով», այսինքն առասպելականին տալով պատմական կիրպարանք: Այդ հրեք հատուածն իրարու համեմատելով կրտսեանը մօտաւորապէս բուն առասպելի բովանդակութիւնը, ընդ ամէնը չորս միջադէպ:

... Ինչպէս էր (Խ. Լ.):

1. Յազատն ի վեր ի Մաթիս բնակող վիշապ կամ վիշապազն Արգաւան վիշապների տաճարում ծառ է տալիս ի պատիւ Արտաշէսի և խորհրդանշել ինում նորան:

2. Արտաշէսի քաջ որդին Արտաւազդ ի հիմնանալն Արտաշատու, ապարանքի տեղ շքանելով, անցնում գնում, շինում է ի մէջ Մարաց (— Վիշապաց, վիշապազանց ?) Վարակերտ:

3. Սաթենիկ տիկնոջ տնայնաքը կամ սէրն առ Արգաւան վիշապը կամ վիշապազն: